ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Արտադրության եղանակի մեջ արտադրողական ուժերի զարգացման մակարդակին արտադրական հարաբերությունների համապատասխանությունը հարաբերական երևույթ է, որովհետև արտադրողական ուժերը զարգանում են ավելի արագ։ Այդ ընթացքում որոշ հարաբերություններ «հնանում են» և չեն համապատասխանում ավելի զարգացած արտադրողական ուժերին։ Դա արտադրության եղանակի երկու կողմերի միջև հակասության դրսևորումն է և պահանջում է տնտեսավարման ձևերի ու մեթոդների փոփոխման միջոցով կատարելագործել արտադրական հարաբերությունները։ Տնտեսավարումը վերարտադրության կազմակերպման այն ձևերի ու մեթոդների ամբողջությունն է, որը տնտեսական օրենքների ճանաչողության հիման վրա գտնվում է գործողության մեջ։ Գործնականում դա սոցիալիստական արտադրական հարաբերությունների արտահայտությունն է, որպես արտադրողական ուժերի զարգացման տնտեսական ձև։ Կախված այն բանից, թե այդ ամբողջ համակարգն ինչպես է արտահայտում արտադրողական ուժերի զարգացումը, նույն չափով կարող է նպաստել կամ խանգարել արտադրողական ուժերի հետագա առաջընթացին։ Տնտեսական այդ երևույթն առավել արտահայտված է դառնում արտադրողական ուժերի ինտենսիվ զարգացման շրջանում և պահանջում է արագորեն վերակառուցել տնտեսավարման մեխանիզմը։

Հարկ է նշել, որ արտադրողական ուժերի զարգացման բովանդակությունը բնության հետ մարդու փոխհարաբերությունն է, դրա օրենքներն ու օրինաչափությունները ճանաչելու և բնության առարկաները վերափոխելու նրա կարողության աստիճանը։ Չպետք է մոռանալ, որ այդ ընթացքում վերափոխվում է նաև մարդը, որպես արտադրողական ուժերի տարր։ Մյուս կողմից, արտադրական հարաբերությունների էությունը մարդկանց հարաբերություններն են միմյանց հետ՝ բնության առարկաների վերափոխման ընթացքում, որտեղ մարդը դառնում է արտադրական հարաբերությունները կրող օբյեկտ։

Ինչպես տեսնում ենք, ընդհանուր համակարգի մեջ վճռական դերը պատկանում է մարդուն, որը որպես արտադրության սուբյեկտիվ գործոն իրականացնում է արտադրողական ուժերի զարգացումը։ Արտադրողական ուժերի զարգացումից ելնելով կատարելագործել տնտեսավարման ձևերն ու մեթոդները, նշանակում է նոր բովանդակություն տալ բնության հետ փոխհարաբերության ընթացքում մարդկանց միջև ծագող հարաբերություններին կամ ձևավորել արտադրողական ուժերի զարգացումը խթանող նոր պայմաններ։ Կախված այն բանից, թե սոցիալիստական արտադրական հարաբերություններն ինչպիսի պայմաններ են ստեղծում հասարակության անդամների կենսագործունեության համար, այդ չափով էլ խթանվում է արտադրողական ուժերի զարգացման նրանց պոտենցիալ հնարավորությունը գործնականացնելու պրոցեսը։

Այսպիսով, սոցիալիստական տնտեսավարման կատարելագործումն անընդմեջ պրոցես է։ Եվ քանի որ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների համապատասխանությունը հարաբերական է, դրանց միջև նույնպես ծագում են հակասություններ, որոնք պահանջում են լուծում։ Այդ գործում վճռական դերը պատկանում է մարդուն, որպես հասարակական գիտակից էակի, իսկ արտադրողական ուժերի կազմում՝ որպես աշխատուժի։

Արտադրողական ուժերի զարգացման հիման վրա արտադրական հարաբերությունների կատարելագործումը նոր պայմաններ է ստեղծում (նյութա-

կան և հոգևոր) մարդկանց գործունեության, հետևապես, աշխատուժի վերարտադրության համար և, կարելի է ասել, որ աշխատուժի վերարտադրության մակարդակը ներկայացնում է հասարակության կողմից բնության տիրապետման աստիճանը։

Սոցիալիստական վերարտադրության ժամանակակից տնտեսավարման մեջ նկատելի է որոշ հարաբերությունների «հնացում»։ Դա վերաբերում է ձեռնարկությունների (արտադրական միավորումների) տնտեսական ինքնուրույնության սահմանափակումներին, փոխադարձ տնտեսական անմիջական կապերին, աշխատանքի և վարձատրության չափերին, վարձատրության վերին և ներքին սահմանների տարբերություններին, աշխատավարձի տարբերակմանը և այլ հարաբերությունների, որոնք չեն խթանում արտադրողական ուժերի զարգացման՝ հասարակության անդամների պոտենցիալ հնարավորությունն իրականացնելու պրոցեսը։ Այդպիսի շահագրգռվածություն կարող է ստեղծել «հնացած» հարաբերությունների շարքից դուրս գալը և դրանց փոխարեն նորերի գործողությունը։ Ավածից չպետք է եզրակացնել, թե արտադրական հարաբերությունները սուբյեկտների ցանկության արդյունք են։ Օբյեկտիվ եզրակացությունն այն է, որ արտադրողական ուժերի զարգացման հետևանքով ձևավորվել են նոր հարաբերությունների պայմանները, ընդլայնվել են տնտեսական օրենքների գործողության շրջանակները և մարդը գործնականի դիտարկման ճանապարհով պետք է ճանաչի տնտեսական երևույթներն ու գործողության մեջ դնի տնտեսական նոր մեխանիզմ։ «Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը պահանջում է,—նշված է ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերում,— ժողովրդական տնտեսության ղեկավարման մշտական կատարելագործում, տնտեսական մեխանիզմի հուսալի և արդյունավետ գործողություն, որը ներառում է տնտեսավարման բազմազան ճկուն ձևեր ու մեթոդներ, հասնել այն բանին, որ դրանք համապատասխանեն տնտեսական զարգացման փոփոխվող պայմաններին ու լուծվող խնդիրների բնույթին»[1]։

Կուսակցությունը տնտեսավարման մեթոդների ու ձևերի կատարելագործման մեջ կարևոր տեղ է տալիս աշխատավորական մասսաների նախաձեռնությանը, նրանց հասարակական ակտիվությանը և գտնում է, որ «կառավարման կատարելագործումը պետք է... լիովին հաշվի առնի արտադրողական ուժերի մեջ և արտադրական հարաբերություններում տեղի ունեցող փոփոխությունները, աշխատավորների լայն մասսաների կրթվածության, գիտակցականության, որակավորման և փորձի աճը»[2]։ Ինչպես տեսնում ենք, կուսակցությունը տնտեսավարման և դրա կատարելագործման մեջ կարևոր տեղ է տալիս աշխատավորական մասսաներին, որոնց գործունեությամբ է պայմանավորված աշխատանքի վերջնական արդյունքի հասարակական օգտակարությունը։ Ժամանակակից պայմաններում, երբ աշխատանքի առարկաները վերափոխելու իր ֆունկցիան մարդը հիմնականում առարկայացնում է աշխատանքի միջոցների մեջ, նա գերազանցապես անցնում է արտադրության միջոցները կատարելագործելու աշխատանքների բնագավառը։ Այս պայմաններում առավել ևս մեծանում է բարձրորակ աշխատողների, նրանց շահագրգռվածության և ակտիվության դերը հասարակական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու մեջ։ Գործնական տնտեսավարումից այժմ պահանջվում է աշխատուժի վերարտադրության կատարյալ ձևեր օգտագործելու, դրա վերարտադրության ծախսերի փոխհատուցումը կատարելագործելու և աշխատավորների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու միջոցով ավելի անմիջական դարձնել հասարակությունից յուրաքանչյուրի ստացած բաժնի և նրա աշխատանքի վերջնական արդյունքի կապը։ Սոցիալիստական տնտեսավարումը, հատկապես բաշխման մեխանիզմը, պետք է ունենան այնպիսի կատարելություն, որպեսզի ակտիվ ազդեցություն թողնեն մարդկանց կենսամակարդակի ու ապրելակերպի վրա։ Հասարակական արտադրության մեջ կոլեկ-

1 «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 206—207։

2 Նույն տեղում, էջ 207։

տիվ և անձնական շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով բաշխման մեխանիզմը պետք է «հուսալի պատնեշ ծառայի անաշխատ եկամուտների, աշխատանքի վարձատրության գործում համահարթման ճանապարհին»[3]։

Երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման առաջիկա խնդիրների լուծման գործում կուսակցությունը վճռական շեշտը դնում է մարդկային գործոնի և նրա աշխատանքի, կենցաղի, կուլտուրայի, սոցիալական հարցերի լուծման, մարդկանց հետաքրքրությունների ու կարիքների բավարարման նկատմամբ հոգատարության վրա և դա «համարում է պետական ու տնտեսական բոլոր մարմինների, հասարակական կազմակերպությունների գործունեության օրենքը»[4]։

Տնտեսավարման ձևերի ու մեթոդների տևական միօրինակությունը, նոր նախաձեռնությունների պակասը և լավագույն օրինակներին մշտապես չհետևելը խզում է առաջացնում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև, դանդաղեցնում է ընդհանուր առաջընթացը։ ՍՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում տնտեսավարման մշտապես կիրառվող գիտափորձերը նպատակամղվում են այդ խնդրի լուծմանը և սոցիալիստական արտադրական հարաբերությունները կատարելագործելու լավագույն օրինակներ են։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1983 թ. հուլիսի 14-ի «Պլանավորման և տնտեսական գործունեության մեջ արդյունաբերության արտադրական միավորումների (ձեռնարկությունների) ինքնուրույնություններն ընդլայնելու, աշխատանքի արդյունքների նկատմամբ պատասխանատվությունը բարձրացնելու լրացուցիչ միջոցառումների մասին» որոշումով 1984 թ. հունվարի 1-ից արդյունաբերության հինգ մինիստրությունների ավելի քան 700 ձեռնարկություններ անցել են լայնամասշտաբ տնտեսական գիտափորձի։ Դա տնտեսավարման այն ձևերի փորձնական կիրառումն էր, որի հիման վրա մեր ձեռնարկությունները պետք է անցնեին ինքնաֆինանսավորման։

1987 թ. հունիսի 30-ին ՍՍՀՄ Գերագույն սովետը ընդունեց «Օրենք պետական ձեռնարկության (միավորման) մասին»։ Այդ օրենքով պետական ձեռնարկություններն աստիճանաբար անցնում են ինքնաֆինանսավորման։ Նոր պայմաններում «ձեռնարկությունը սահմանված նորմատիվով աշխատավարձի ֆոնդ (աշխատանքի վարձատրության ֆոնդ) է կազմում ըստ աշխատանքի վերջնական արդյունքների»։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նշված որոշումով աշխատավարձի ֆոնդի նորմատիվային պլանավորման համար նախատեսվեց երեք ուղղություն. ա) աշխատավարձի ֆոնդի աճի նորմատիվ արտադրանքի ընդհանուր ծավալի յուրաքանչյուր տոկոսի աճի համար, բ) աշխատավարձի նորմատիվ արտադրանքի մեկ միավորի համար (բնական արտահայտությամբ), գ) աշխատավարձի նորմատիվ արտադրանքի մեկ ռուբլու համար։

Աշխատավարձի ֆոնդի նորմատիվային սահմանման թվարկած ձևերից յուրաքանչյուրը, մեր կարծիքով, ունի իր առավելություններն ու թերությունները։ Դրանցից առավել ընդունելի կարելի է համարել առաջինը, որովհետև աշխատավարձի ֆոնդի աճը ուղղակի կախման մեջ է արտադրանքի ընդհանուր ծավալից և ավելի անմիջական է դարձնում առանձին աշխատողների և կոլեկտիվի աշխատանքի, ինչպես նաև հասարակությունից աշխատավարձի միջոցով ստացվող բաժնի կապը վերջնական արդյունքի հետ։ Սակայն այստեղ բաց է մնում աշխատավարձի և վերջնական արդյունքի որակի հարցը, որը ժամանակակից արտադրության հիմնական խնդիրն է։ Կարծում ենք, որ աշխատավարձի ֆոնդի աճի նորմատիվը պետք է կապվի ոչ միայն արտադրանքի

---

3 Նույն տեղում, էջ 206։

4 Նույն տեղում, էջ 211։

ընդհանուր ծավալի աճի յուրաքանչյուր տոկոսի, այսինքն միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ զուտ քանակական առումով, այլ նաև արտադրանքի որակի բարելավման հետ։ Դա կլինի այն հիմնական լծակը, որով աշխատավարձի ֆոնդի աճի յուրաքանչյուր տոկոսին կհամապատասխանի արտադրանքի որակի որոշակի բարելավում։ Դա կարևոր է նաև նրանով, որ ժողովրդական տնտեսության մասշտաբով բարձր հիմքերի վրա կգրվի պակյալ աշխատուժի վերարտադրությունը, որն այժմ զգալի բարելավման կարիք ունի։

Աշխատավարձի ֆոնդի նորմատիվը արտադրանքի մեկ միավորի (բնական արտահայտությամբ) համար նույնպես ունի վերը նշված թերությունը։ Բացի այդ, այն պարունակում է պոտենցիալ հնարավորություն աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության աճի չհիմնավորված մոտեցման համար։

Աշխատավորների ստեղծագործական նախաձեռնությունը բարձրացնելու, աշխատանքի արդյունքի և դրա որակի նկատմամբ նրանց շահագրգռվածությունն ուժեղացնելու համար տնտեսական կարևոր միջոցառում հանդիսացավ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման կոլեկտիվ կապալի եղանակին անցումը։ Գյուղատնտեսական արտադրության տեխնիկական պայմանների, աշխատանքի նորմավորման, մատակարարումների կազմակերպման և այլ պայմանների հետ, այն նախատեսում է վարձատրության կազմակերպում ըստ վերջնական արդյունքի։

Տնտեսավարման նոր ձևերի ու մեթոդների արմատավորման շարքում կարևոր միջոցառում կլինի ձեռնարկությունների անցումն ինքնաֆինանսավորման, որի պայմաններում աշխատավորական կոլեկտիվի և նրա յուրաքանչյուր անդամի բաժինն ամբողջությամբ կախված կլինի վերջնական արդյունքի քանակից և որակից։

Կուսակցությունը երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման գործում վճռական դերը հատկացնելով աշխատավորական մասսաներին, գտնում է, որ «հասունացած պրոբլեմը, որը որոշում է կառավարման սիստեմի և տնտեսավարման մեթոդների վերակառուցման ամբողջ հաջողությունը, մեր կադրերի պրոֆեսիոնալ պատրաստությունն է։ Ընդ որում, բոլոր մասնագիտությունների աշխատողների պատրաստման անկապտելի և անհրաժեշտ տարրը դարձել են տնտեսագիտական գիտելիքները»[5]։ Նշված խնդրի լուծումն առավելապես պայմանավորված է սովորողների աշխատանքային դաստիարակությամբ, պրոֆտեխկրթության համակարգի կատարելագործումով, բանվորական որակյալ կադրերի պատրաստումով և նրանց կոմունիստական դաստիարակության բարձր մակարդակով։ Միայն անցած հնգամյակում Երևանի պրոֆտեխնիկական ուսումնարանները պատրաստել են ավելի քան 61 հազ. երիտասարդ բանվորներ։ Ներկայումս 34 ուսումնարաններում 155 մասնագիտությունների գծով սովորում են 15,5 հազ. պատանիներ ու աղջիկներ[6]։ Համագումարի առաջադրած խնդիրը հավասարապես վերաբերում է նաև բարձրագույն ուսուցմանը, որտեղ պատրաստվում են բարձր որակավորման մասնագետներ և որոնց անմիջական գործունեությամբ պետք է իրականացվի սոցիալիստական արտադրությունն ինտենսիվացնելու կուսակցության կուրսը։

Տնտեսավարման նոր ձևերի ու մեթոդների օգտագործման կապակցությամբ հետաքրքիր է նաև սոցիալիստական մյուս երկրների փորձը։ Այդպիսի գիտափորձ իրականացվում է Բուլղարիայում, որի էությունը հանգում է հետևյալին. 1. Տնտեսական միավորումները և կազմակերպություններն անցնում են ինքնափոխհատուցման (ինքնաֆինանսավորման)։ 2. Արտադրանքի քանակի, որակի և տեսականու որոշումը կողմնորոշվում է դեպի շուկան (ապրանքադրամական հարաբերությունները)։ Այն ձեռնարկությունները, որոնց արտադրանքը շուկայում գնորդ չի գտնում, կրում են վնաս։ 3. Ձեռնարկություն-

5 Նույն տեղում, էջ 355։

6 «Սովետական Հայաստան», 6. XII. 1986։

ների աշխատանքը գնահատելու հիմնական ցուցանիշը և ֆինանսական ռեսուրսների գլխավոր աղբյուրը շահույթն է։

Տնտեսավարման նոր ձևը ենթադրում է նաև վարձատրության նոր սկզբունքների օգտագործում։ Վարձատրությունը կախման մեջ է դրվում ձեռնարկության տնտեսական գործունեությունից։ Մինչև աշխատավարձ տալը ձեռնարկությունները վերականգնում են նյութական ծախսերը, մարում են վարկային կազմակերպությունների պարտքերը, վճարում են պետական հարկը և կատարում պարտադիր հատկացումներ՝ ռեզերվային, ընդլայնման և զարգացման ու սոցիալական ֆոնդերին։ Այդ բոլորից հետո վճարվում է աշխատավարձ, իսկ վերջում մնացորդ ազատ ռեսուրսները կարող են հատկացվել վերջին երեք ֆոնդերից ցանկացածին։

Ինչպես տեսնում ենք, Բուլղարիայում ձեռնարկությունների ֆինանսական ինքնուրույնության հետ, կարևոր ուշադրություն է դարձվում նաև ապրանքադրամական հարաբերություններին, որոնց դերն՝ արտադրանքի որակը բարելավելու գործում չափազանց մեծ է։ Կարծում ենք, ընդունելի է նաև այն, որ կոլեկտիվի և նրա անդամների աշխատավարձը չի երաշխավորվում։ Այս հանգամանքը կոլեկտիվի և առանձին աշխատողների մեջ սկզբից հիմնավոր պատկերացում է ձևավորվում ձեռնարկության վերջնական արդյունքի և աշխատավարձի չափի ուղղակի կապի մասին, նրանց մղում է բարձր արտադրողական աշխատանքի։ Արտադրանքի քանակի, տեսականու և որակի կողմնորոշումը ապրանքադրամական հարաբերությունների միջոցով կապ է հաստատում արտադրանքի որակի և աշխատավարձի միջև, խթանում է արտադրանքի որակի անընդհատ բարելավումը։

Վերևում նշվեց, որ աշխատավորների մասնագիտական պատրաստվածության հետ կուսակցությունը կարևոր տեղ է տալիս նրանց տնտեսագիտական գիտելիքներին։ Խնդիր է դրվում մշակել բանվորական և ինժեներական կադրերի տնտեսագիտական կրթության այնպիսի համակարգ, որպեսզի յուրաքանչյուրը գործի ամբողջ էությունը պատկերացնելով մոտենա տեխնիկական լուծումների տնտեսագիտական գնահատմանը։ Ժամանակակից պայմաններում միայն բարձր որակավորումը բավարար չէ արտադրության վերակառուցման, ինտենսիվացման և դրա արդյունավետությունը բարձրացնելու խնդիրների լուծման համար։ Այսօրվա աշխատողը պետք է որոշակի պատկերացումներ ունենա արտադրության վերակառուցման, նոր ինվեստացիոն քաղաքականության, աշխատանքի նորմավորման, դրա վերջնական արդյունքի և աշխատավարձի կապի, աշխատանքի արտադրողականության և տնտեսական այլ երևույթների մասին։ Դա կբարձրացնի նրա պատասխանատվությունը, ստեղծագործական նախաձեռնությունը, հասարակական ակտիվությունը և շահագրգռվածությունը հասարակական արտադրության մեջ։ Առանց տնտեսագիտական բավարար գիտելիքների նա չի կարող ակտիվ մասնակցություն ունենալ արտադրության կառավարման և տնտեսավարման պրոցեսին, որը կուսակցությունը համարում է ամեն մի տնտեսական մեխանիզմի արդյունավետության երաշխիքը։ Ասվածից հետևում է, որ ժամանակակից պայմաններում որակյալ աշխատուժի վերարտադրության պրոցեսը միանգամայն նոր բովանդակություն պետք է ստանա։ Հիմնական խնդիր ունենալով մասնագիտական բարձր պատասխանատվության ձևավորումը, այն պետք է զուգակցվի պատրաստվող մասնագետների տնտեսագիտական գիտելիքների ձևավորումով և նրանց համակողմանի զարգացման մյուս խնդիրների լուծումով։ Այնպես, ինչպես այսօր կարևոր է արտադրության վերակառուցումը, որի համար ժողովրդական տնտեսության մեջ փոփոխության է ենթարկվում ինվեստացիոն քաղաքականությունը, նման վերակառուցման կարիք ունի նաև աշխատուժի վերարտադրությունը։ Հարցն այն է, որ աշխատուժի վերարտադրության ֆինանսավորումը գերազանցապես կատարվի դրա ինտենսիվացման ուղղությամբ։ Այդ հարցը պետք է դառնա ոչ միայն որակյալ աշխատուժի արտադրությամբ զբաղված հիմնարկությունների ու կազմակերպությունների գործունեության առանցքային խնդիրը, այլև դրանով անմիջականորեն պետք է զբաղվեն նաև սոցիալիս-

տական ձեռնարկությունները։ Առ այսօր. բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները, մասամբ նաև պրոֆտեխկրթության համակարգը մասնագետների պատրաստումը կատարում են անհայտ հասցեատերերի համար։ Դա որոշակի է դառնում միայն ավարտական կուրսի վերջում, երբ ուսումնական հաստատությունը ստանում է ձեռնարկությունների պահանջագրերը և կատարում շրջանավարտների նշանակում իր նախաձեռնությամբ։ Ժամանակն է, որպեսզի ուսուցման առաջին օրից որոշակի լինեն պատրաստվող կադրերի հասցեատերերն ըստ սովորողների, և ձեռնարկությունները սիստեմատիկ տեղեկություններ ունենան իրենց ապագա մասնագետների ուսուցման ընթացքի մասին։

«Երկրում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությունը վերակառուցելու հիմնական ուղղությունների մասին» ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի մարտյան (1987 թ.) որոշման մեջ ասված է, որ որակյալ մասնագետների պատրաստումն անհրաժեշտ է իրականացնել ձեռնարկությունների և ուսումնական հաստատությունների միջև կընքվող պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև ձեռնարկություններին մասնակիորեն մասնակից դարձնել ուսումնական ծախսերի փոխհատուցմանը։ Կարծում ենք, որ այդ խնդրի է՛լ ավելի հաջող լուծումը պահանջում է կազմակերպել գիտափորձ՝ ուսումնական հաստատությունների բոլոր սովորողների բաշխումը կատարել ընդունվելու տարում, ձեռնարկությունների կարևոր խնդիրներից մեկը համարել իրենց ապագա աշխատողների ուսուցմանը հետևելու, արտադրական պրակտիկան կազմակերպելու, աշխատանքով ապահովելու և այլ պարտականություններ։ Դա կնպաստի ուսուցման որակը բարելավելուն, ավելի կբարձրացնի ուսումնական հաստատությունների և ձեռնարկությունների պատասխանատվությունը որակյալ մասնագետների պատրաստման ու օգտագործման բնագավառում և կբարելավի աշխատուժի պլանաչափ ձևավորման ու տեղաբաշխման գործը։

Մեր երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման հեռանկարային խնդիրների լուծման գործում գնալով է՛լ ավելի է մեծանում աշխատուժի վերարտադրության ու ռացիոնալ օգտագործման նշանակությունը և յուրաքանչյուր ժամանակաշրջանում պահանջվում է նորովի լուծել ժողովրդատնտեսական այդ կարևորագույն պրոբլեմը։

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СОЦИАЛИСТИЧЕСКОГО ХОЗЯЙСТВОВАНИЯ И ЗАДАЧИ ВОСПРОИЗВОДСТВА РАБОЧЕЙ СИЛЫ

ГРИГОР КИРАКОСЯН

Резюме

Совершенствование социалистического хозяйствования—это непрерывный процесс, поскольку соответствие производительных сил и производственных отношений относительно. Между ними могут возникать противоречия, которые требуют своего решения, а при этом главная роль принадлежит человеку, его производственной и общественной деятельности. Совершенствование производственных отношений на основе развития производительных сил создает новые условия (материальные и духовные) для человеческой деятельности и, следовательно, для воспроизводства рабочей силы. Поэтому объективно возникает задача—на основе практических наблюдений познать новые явления и разработать соответствующий экономический механизм. При совершенствовании форм и методов хозяйствования на основе познания экономических законов социализма КПСС отводит важное место трудящимся массам и подчеркивает, что при совершенствовании управления производством должен полностью учитываться уровень образованности, сознательности, квалификации и трудового опыта.